

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Լուսինե Գառնիկի Այդինյանի

«ԿԵՌՆԵՏՆԵՐԻ (TURDIDAE, TURDUS) ԷԿՈԼՈԳԻԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

**ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» Գ.00.08 «Կենդանաբանություն,
մակարածաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ**

Մեծ թափով ընթացող քաղաքների գերուրբանիզացիան հանգեցնում է քաղաքաշինական, կլիմայական, սոցիո-մշակութաբանական մի շարք լուրջ խնդիրների: Այս տեսանկյունից ատենախոսության թեման բավականին արդիական է, որը նվիրված է Ստեփանակերտ քաղաքում և հարակից տարածքներում կեռնեխների (*Turdidae, Turdus*) էկոլոգիայի ուսումնասիրությանը:

Արցախն աչքի է ընկնում իր հարուստ կենսաբազմազանությամբ, որտեղ իր ուրույն դերն ունի կենդանական աշխարհը, մասնավորապես թռչնաֆաունան: Թռչունները, մյուս կենդանիների հետ միասին էկոհամակարգերի կարևոր բաղադրիչներից են: Վերջին տարիներին երկարատև պատերազմական գործողությունները, սոցիալ-տնտեսական փոփոխությունները և այլ իրավիճակները մեծ ազդեցություն են թողել Արցախի կենսաբազմազանության վրա: Արցախում տարիներ շարունակ թռչունների ֆաունայի գույքագրում չի իրականացվել և չկան ամփոփ տվյալներ թռչունների տեսակային կազմի, տարածվածության և այլ էկոլոգիական ուսումնասիրությունների վերաբերյալ: Ուրբանիզացված լանդշաֆտների թռչնաֆաունայի ուսումնասիրությունները ունեն և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն, այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ XIX դարի վերջին XX դարի երկրորդ կեսին քաղաքային թռչնաֆաունայի ուսումնասիրությունները առանձնացվել են, որպես թռչնաբանության առանձին ճյուղ:

Քանի որ առաջին հերթին քաղաքներում են ձևավորվում մարդու և թռչունների սերտ շփումները և այստեղ են ձևավորվում թռչունների գոյատևման համար նոր ու առանձնահատուկ էկոլոգիական արհեստական պայմանները, ուստի քաղաքային թռչնաշխարհի ուսումնասիրությունը հանդիսանում է առաջնահերթ և կարևոր խնդիր: Ընդհանուր առմամբ ուրբանիզացված տարածքների կենդանիների էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունները, էկոլոգիական պայմանների

մանրամասն բնութագրումը էապես կարևոր նշանակություն ունի քաղաքաշինության առումով քաղաքի ռացիոնալ կառավարման, բարեկարգման, այդ թվում նաև կանաչապատման գործում: Քաղաքային պայմանները մեծ ազդեցություն են թողնում այնտեղ բնակվող թռչունների վրա՝ փոխում նրանց կենսակերպը, վարքագիծը և սեզոնային ռիթմերը: Այս և մի շարք այլ հարցերի ուսումնասիրմանն է նվիրված Լուսինե Այդինյանի կողմից ներկայացվուղ ատենախոսությունը: Աշխատանքի նպատակն է եղել ընդհանուր առմամբ ուսումնասիրել Ստեփանակերտ քաղաքի և հարակից տարածքների թռչնաֆաունայի տեսակային կազմը և բաշխվածությունը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կեռնեխների (*Turdus*) ցեղի էկոլոգիաի և կենսաբանության այլ հարցերի հետազոտություններին՝ որպես ուրբանիզացված տարածքներին հարմարվող մոդելային խումբ:

Հայցորդի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել է Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում և նրա հարակից տարածքներում թռչնաֆաունայի տեսակային կազմը, արձանագրվել է 14 կարգերին, 37 ընտանիքներին պատկանող 117 տեսակ: Ուսումնասիրված տարածքներում *Turdus* ցեղը ներկայացված է չորս տեսակով՝ սև կեռնեխ (*Turdus merula* Linnaeus, 1758), սինակեռնեխ (*Turdus pilaris* Linnaeus, 1758), երգող կեռնեխ (*Turdus philomelos* C.L.Brehm, 1831), սոսնձակեռնեխ (*Turdus viscivorus* Linnaeus, 1758): Պարզաբանվել է նշված տեսակների տարածվածությունը և բաշխվածությունը, կենսաբանության ու բազմացման առանձնահատկությունները, կերի կազմը և սեզոնայնությունը: Կատարվել է ուրբանիզացված բիոտոպերում կեռնեխների վրա ազդող գործոնների վերլուծությունը, որը հանդիսանում է աշխատանքի կարևոր գիտական նորույթներից մեկը:

Աշխատանքը շարադրված է 143 էջի վրա, կազմված է 6 գլուխներից, ամփոփումից, եզրակացություններից, 138 անուն ներառող օգտագործված գրականության ցանկից, որից 17 հայրենական, 121 արտասահմանյան: Այն պարունակում է 3 նկար, 21 աղյուսակ, 35 գծապատկեր: Ատենախոսությանը կցված է 72 էջից բաղկացած հավելված:

Ներածությունում հայցորդը հիմնավորում է Ստեփանակերտի և նրա հարակից տարածքներում թռչնաֆաունայի և թռչնաֆաունայում համեմատաբար լայն տարածված, գարնանը բազմացող, ձմռանը ձմեռող Turdidae ընտանիքի, *Turdus* ցեղի չորս տեսակների ուսումնասիրությունների անհրաժեշտությունը, արդիականությունն, աշխատանքի նպատակը և խնդիրները, ատենախոսության գիտական նորույթը,

տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, աշխատանքի փորձահավաստիությունը և գիտական հրապարակումները:

Ուսումնասիրությունների արդյունքները որոշակի նորույթ են ուրբանիզացված տարածքների յուրօրինակ պայմաններում մոտ ազգակցական տեսակների էկոլոգիական մեխանիզմների բացահայտման, ուրբանիզացիայի և թռչունների սինանթրոպացման գործընթացների վերաբերյալ տեսակետների ընդլայնման համար: Ատենախոսության արդյունքները կարևոր գործնական նշանակություն ունեն, քանի որ հնարավորություն են տալիս քաղաքների և նրանց հարակից տարածքների կենսաբազմազանության, մասնավորապես թռչնաֆաունայի պահպանության գիտականորեն հիմնավորված, առավել արդյունավետ միջոցառումների կազմակերպման և իրականացման համար, ինչն էլ իր հերթին կնպաստի ուրբանիզացված տարածքներում թռչունների էկոլոգիական դինամիկ հավասարակշռության պահպանմանը: Ատենախոսության արդյունքները կարող են ներառվել նաև «Կենդանիների էկոլոգիա», «Ողնաշարավորների կենդանաբանություն» և «Թռչնաբանություն» առարկաների բուհական և հետբուհական ուսումնական /գործնական/ ծրագրերում:

Գրական ակնարկում (գլուխ 1) հեղինակը բավականաչափ մանրամասն ներկայացրել է պատմաաշխարհագրական և ֆիզիկաաշխարհագրական տվյալները, ինչպես նաև տալիս է թռչունների հետազոտման պատմական ակնարկը:

Հեղինակը հարուստ գրական աղբյուրների հիման վրա ամփոփել է ինչպես նախորդ հետազոտողների կողմից ուսումնասիրվող տեսակների կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ կատարված աշխատանքները, այնպես էլ ներկայացրել է իր կողմից Արցախում կատարած ուսումնասիրությունների արդյունքները:

Գլուխ 2-ում ատենախոսը նկարագրել է հետազոտության նյութը և մեթոդները, որտեղ առանձին ենթագլուխների ձևով տալիս է իրականացվող աշխատանքի վայրը և ժամկետները, հետազոտման օբյեկտը, ուսումնասիրման մեթոդները: Ուսումնասիրությունների արդյունքների վիճակագրական մշակումներն իրականացվել են Mintab 17.1.0)) և IBM SPSS Statistics 27 փաթեթի օգնությամբ:

Ատենախոսության 3-րդ գլուխում ներկայացված է Ստեփանակերտի և նրա հարակից տարածքների թռչունների տեսակային կազմը ու բաշխվածությունը: Որտեղ Այդինյանը մանրամասն ներկայացրել է թռչունների 117 տեսակների քաղաքում բնակվելու բնույթի արձանագրած թռչունների հարաբերակցությունը (նստակյաց՝ 54,

բնադրող՝ 44, չվող՝ 4, ձմեռող՝ 4, չվահյուր՝ 11 տեսակ): Հեղինակը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել դենդրոֆիլ, կամպոֆիլ, սկլերոֆիլ և լիմնոֆիլ տեսակներին: Այստեղ հայցորդը տարբեր կենսամիջավայրերում կատարված դիտարկումների արդյունքում ներկայացրել է ֆաունայի նմանության գործակիցները, ըստ ամիսների թռչունների տեսակային կազմի փոփոխությունները և վերլուծությունները:

Գլուխ 4-ում ներկայացվում է տարվա սեզոններից և կենսամիջավայրերից կախված թռչունների տեսակային կազմի և թվաքանակի փոփոխությունները: Այն կազմված է երկու ենթագլուխներից: Ենթագլուխ 4.1-ը նվիրված է թռչունների քաղաքային պոպուլյացիաների ձևավորման ընդհանուր սկզբունքներին: Հայցորդն իր դիտարկումները համադրելով գրական տվյալների հետ բացահայտում է ուրբանիզացված տարածքների յուրացման ընթացքում թռչունների մոտ ի հայտ եկած կենսաբանության փոփոխությունները, միաժամանակ ներկայացնում է շինարարական աշխատանքների, պատերազմական գործողությունների և առհասարակ անթրոպոգեն գործոնների դերը քննարկվող տեսակների բնակատեղերի վաթարացման և կրճատման գործում:

Ենթագլուխ 4.2-ում հեղինակը ներկայացնում է թռչունների ապրելատեղերի կազմի ու կառուցվածքի դինամիկայի ուսումնասիրությունները: Քննարկվող տարածքներում, թռչունների բնակեցման դինամիկայի ուսումնասիրությունների համար առանձնացնում է սեզոնային ժամկետներ և բնութագրում թռչնաֆաունայի տեսակային կազմի փոփոխությունները: Այդինչյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում լեռնատափաստանների թռչնահամալիրների, անտառային և բնակավայրերի թռչունների սեզոնային դինամիկային:

Ատենախոսության 5-րդ առանցքային գլուխը նվիրված է Ստեփանակերտի և նրա հարակից տարածքների կենտրոնների 4 տեսակների համեմտական էկոլոգիային:

Ենթագլուխ 5.1-ում դիտարկում է կենտրոնների բնադրման խտությունը և սեզոնային փոփոխությունները:

Ենթագլուխ 5.2-ում ներկայացված է կենտրոնների տարբեր տեսակների բնադրման էկոլոգիան, բնադրման խտությունները՝ պուրակներում, պարտեզներում, զբոսայգիներում, անտառաշերտերում, բանջարանոցներում, սիզամարգերում, գերեզմանոցներում: Բոլոր 4 տեսակների համար կատարվել է ստացված տվյալների վիճակագրական մշակումներ ու համեմատություններ ըստ բնակատեղերի: Միաժամանակ հեղինակի կողմից մանրակրկիտ վերլուծվել է քննարկվող տեսակների կողմից բնադրման համար նախընտրելի ծառերն ու թփերը, մարդաշեն կառույցները: Ներկայացվել է գետնից բների տեղադրման բարձրությունները և փոփոխությունները՝

կախված անթրոպոգեն ծանրաբեռնվածությունից: Հեղինակի կողմից մանրակրկիտ վերլուծությունների են ենթարկվել տարբեր կենսամիջավայրերում կեռնեխների քննարկվող տեսակների բների չափերը, բներում ձվերի, ձվերից դուրս եկած և թռիչքի հասակի հասած ճտերի քանակը:

Գլուխ 6-ում ներկայացվում է կեռնեխների կերահրապարակները, կերի կազմը, սեզոնայնությունը: 6.1 ենթագլխում ատենախոսը կեռնեխների կերահրապարակները բաժանում է բնադրման և աշնանային-ձմեռային շրջանների:

Ենթագլուխ 6.2-ում մանրակրկիտ ներկայացնում է կեռնեխների կերաբաժնի կազմը, նախընտրելի կերահրապարակները, կերաբաժնի սեզոնային փոփոխությունները և այդ փոփոխությունների հետ պայմանավորված կեռնեխների բաշխվածությունը կենսամիջավայրերում: Կեռնեխների բաշխվածության, քոչերի կամ առհասարակ տեղափոխությունների ուղղությունները պարզելու համար հայցորդի կողմից օղակավորվել է կեռնեխների չորս տեսակին պատկանող 540 (280♂♂, 260♀♀) առանձնյակներ, այդ թվում սև կեռնեխներ՝ 167 (88♂♂, 79♀♀), սոսնձակեռնեխներ՝ 143 (73♂♂, 70♀♀), սինակեռնեխներ՝ 120 (63♂♂, 57♀♀), երգող կեռնեխներ՝ 110 (56♂♂, 54♀♀) և հետ որսի միջոցով պարզել տեղափոխությունների հեռավորությունները:

Ատենախոսության շարադրանքն ավարտվում է ամփոփումով և եզրակացություններով:

Ատենախոսության արդյունքները նոր տեղեկություններով զգալիորեն լրացնում և ընդլայնում քաղաքներում և հարակից տարածքներում հանդիպող կեռնեխների տեսակների հարմարվողականության մասին պատկերացումները: Հեղինակի կողմից կատարված աշխատանքի տվյալները կարող են որպես գիտական հիմնավորում օգտագործվել քաղաքներում բնապահպանական միջոցառումների մշակման և իրականացման ընթացքում:

Ատենախոսի ներկայացրած բոլոր եզրակացությունները բխում են ուսումնասիրությունների արդյունքներից, հիմնավորված են փաստերով ու մեկնաբանություններով, որտեղ տրամաբանորեն և ճշգրիտ գնահատվել է բավականաչափ բարդ ու աշխատատար նյութը, ստացված արդյունքները:

Լուսինե Գառնիկի Այդինյանի «Կեռնեխների (Turdidae, Turdus) էկոլոգիան Ստեփանակերտ քաղաքում և հարակից տարածքներում» թեմայով կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսությունը ավարտուն գիտական հետազոտություն է: Այն իր գիտական արժեքով, արդիականությամբ, ստացված տվյալների նորույթով, տեսական ու գործնական նշանակությամբ կարևոր ներդրում է կենսաբանական

ուսումնասիրությունների շարքում:

Քննարկվող աշխատանքը գերծ է սկզբունքային թերություններից, սակայն ինչպես յուրաքանչյուր ծավալուն գիտական աշխատանքում տեղ են գտել որոշ վրիպումներ և անճշտություններ: Նշենք որոշակի դիտողություններ և ցանկություններ: Բացի այդ, կուզեի պարզաբանում ստանալ որոշ հարցերի վերաբերյալ:

1. Արցախի պատմաաշխարհագրական և կլիմայական նկարագիրը (էջ 9) նշված կոորդինատներում և ջերմաստիճաններում աստիճանացույցերը չի երևում, օրինակ պետք է լինի $39^{\circ} 23'50''$, սակայն ներկայացված է $390 23'50''$, կամ $+10^{\circ} C$, գրված է $+100 C$, գրված է $+200$ -ից $+230$, գրված է $+180$ -ից $+200C$ և այլն:

2. Գլուխ 2 վերնագրվում է «Հետազոտության նյութը և մեթոդները», բայց 2.1 ենթագլուխը սկսվում է «Իրականացվող աշխատանքի վայրը և ժամկետները» վերնագրով (էջ 16), սակայն դա նպատակահարմար կլիներ առանձնացնել և ներառել 1.1 ենթագլուխում՝ «Արցախի պատմաաշխարհագրական և կլիմայական նկարագիրը»:

3. Ատենախոսությանը կցված է 72 էջից բաղկացած հավելված, որտեղ ներկայացված են դաշտային պայմաններում իրականացված աշխատանքների և թռչունների ֆոտոլուսանկարները և բազմաթիվ աղյուսակներ: Նպատակահարմար կլիներ որոշ լուսանկարներ /թռչունների տեսակները, բները, բիոտոպները և այլն/ ներառել «Հետազոտության նյութը և մեթոդները» Գլուխ 2-ում, որն ավելի ընկալելի և բովանդակության տեսակետից ավելի արժեքավոր կդարձներ աշխատանքը:

4. Հաշվի առնելով ատենախոսության ամփոփման մեջ նյութի բովանդակությունը և 7 կետերից կազմված եզրակացությունները նպատակահարմար կլիներ աշխատանքում ներկայացնել առաջարկություններ քաղաքների և նրանց հարակից տարածքների կենսաբազմազանության, մասնավորապես թռչնաֆաունայի պահպանության գիտականորեն հիմնավորված առավել արդյունավետ միջոցառումների կազմակերպման համար՝ քաղաքաշինության ոլորտում:

Օրինակ. Կեռնեխների բնակեցման, պահպանման և բարելավման համար, ներառյալ՝ ծառերի և թփերի տնկումը, որպես սննդի և ապաստարանի աղբյուր նպաստում են կեռնեխների առողջ պոպուլյացիաների ձևավորմանը, ուստի նմանօրինակ քաղաքների կանաչապատման համար նպատակահարմար է ընտրել լայնատերև սաղարթավոր ծառեր և լայնատերև ծառաթփեր:

Աշխատանքի վերաբերյալ նշված վրիպումներն էական նշանակություն չունեն և ոչ մի բացասական ազդեցություն չեն կարող թողնել աշխատանքի արժանիքների վրա, իսկ

առաջարկությունները վերաբերում են հետագա շարունակվելիք աշխատանքներին:

Սեղմնագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսական աշխատանքում ներկայացվող նյութերին:

Ընդհանուր առմամբ պետք է նշեմ, որ թեմայի արդիականության, գիտական աշխատանքի խորության, աշխատանքի նորույթի, ինչպես նաև գիտական և գործնական նշանակության առումով Լուսինե Գառնիկի Այդինյանի «ԿԵՌՆԵԽՆԵՐԻ (TURDIDAE, TURDUS) ԷԿՈԼՈԳԻԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» ատենախոսությունը արժանի է դրական գնահատականի, լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսության՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ Լ.Գ. Այդինյանը արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Կենսաբանական գիտությունների թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի

գիտական կենտրոնի ավագ գիտաշխատող



Ա. Լ. Աղասյան

Գիտական կենտրոնի ավագ գիտաշխատող Ա. Լ. Աղասյան ստորագրությունը
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի

գիտական կենտրոնի գիտական քարտուղար,

կենսաբանական գիտությունների թեկնածու



Լ.Գ. Խաչատրյան